# ԲԵՆԶԻՆԻ ԳՆՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՇՀԲՁԲ-ԱԵՍՀԿ-11/1-14-1

ք.Երևան «      » հունվար 2014թ.

«Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը,ի դեմս տնօրեն Ս. Ղալթախչյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև`Գնորդ), մի կողմից, և «                    » ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն          (այսուհետև` Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1.Պայմանագրի առարկան,գինը և գործողության ժամկետը**

1.1 Վաճառողը պարտավոր է սույն պայմանագրով սահմանված կարգով,նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում`Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով` տեխնիկական բնութագրով նախատեսված *բենզին* (այսուհետև` ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար:
1.2 Պայմանագրի գինը ըստ ընդունված գնային առաջարկի կազմում է                    դրամ:
1.3 Ապրանքի մատակարարումը սկսվում է **փետրվարից**:

1.4 Մեկ տեսակի գերազանցմամբ Ապրանքի հանձնումը չի ծածկում այլ տեսակի Ապրանքի թերի հանձնումը:

**2.Մատակարարման պայմանները**

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

**3.1 Գնորդն իրավունք ունի`**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.
3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի` սույն պայմանագրի 1.1 կետում նշված ստանդարտին չհամապատասխանող Ապրանք.

ա) Պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) Չընդունել Ապրանքն` իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք,ապա

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց,իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա` պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

**3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք իր ընտրությամբ`**

**ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.**

**բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանգրի 7.2 կետով նախատեսված տույժը.**

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքների փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համատասխան Ապրանքներով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահաջել Վաճառողից սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք` սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն` Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև